ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 14

ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

«19» «07» 2023թ.

Լոռու մարզի Սպիտակ համայնքի տարածաշրջանի Լոռի Քարտ համայնքի Ներսիսյան գյուղ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս տնօրեն՝ Գ.Հովհաննիսյանի, (այսուհետ՝ Կատարող), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով կողմեր (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին ագրոքիմիական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան.

1.1.Սույն պայմանագրով Կատարողը, հանձինս Կազմակերպության ներկայացուցիչ Գևորգ Սողոյան-ի պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ Ներսիս վարչական տարածք/ներ/ում իրականացնել հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով Պատվիրատուի մշակելի հողատարածքի ագրոքիմիական դաշտային ու լաբորատոր հետազոտում, ագրոքիմիական քարտեզի և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրի կազմում և հանձնում վարչական տարածքին՝ օգտագործման համար:

2. Պայմանագրի գործողության ժամկետները.

2.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

3.1 Կատարողը պարտավոր է՝

3.1.1. սույն Պայմանագրի 1.1 կետի համաձայն իրականացված հետազոտման արդյունքների հիման վրա կազմել և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին վարչական տարածքի օգտագործմանը հանձնել հողի բերրիության և բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրեր հանդիսացող ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակության ագրոքիմիական քարտեզ և երաշխավորագիր մշակաբույսերի պարարտացումը արդյունավետ ձևով կատարելու համար, միաժամանակ իրականացնել մասնագիտական օգնություն դրանց ճիշտ օգտագործման հարցում:

3.2 Կատարողն իրավունք ունի՝

3.2.1.պահանջել Պատվիրատուից վճարել պատշաճ որակով մատուցված Ծառայությունների համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 4.1 կետով սահմանված գինը և վճարման ժամկետը,

3.2.2.ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկություններ:

3.3 Պատվիրատուն պարտավոր է՝

3.3.1.կատարողին վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 4.1 կետով սահմանված գինը և վճարման ժամկետը:

3.3.2.ստեղծել համապատասխան պայմաններ ագրոքիմիական դաշտային հետազոտությունը (հողանմուշների վերցման աշխատանքները) սահմանված կարգով կատարելու համար:

3.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.4.1.վաղաժամկետ լուծել Պայմանագիրն՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելով Կատարողին և վճարելով մինչ ծանուցման պահը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների համար:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը.

4.1.Համայնքի մշակովի հողատարածքի դաշտային հետազոտման, հողանմուշի լաբորատոր փորձաքննության կատարման, ագրոքիմիական քարտեզի և պարարտանյութերի կիրառման երաշխավորագրի կազմման համար՝ պատվիրատուին վճարել 50.000 դրամ (ներառյալ բոլոր հարկերն ու վճարները):

4.2.Վճարի հաշվարկը և դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող մատուցված ծառայությունների արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը /թիվ 1 հավելված/ վավերացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

5. Կողմերի պատասխանատվությունը.

5.1.Սույն Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերը իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3.Պայմանագրից ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4.Պայմանագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկական օրինակ հանձնվում է կողմերից յուրաքանչյուրին:

6.Կողմերի հասցեները,բանկային հաշվեհամարները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
Մարզ Լոռի Տարածաշրջան Լոռի Քաջարան _____խոշորացված համայնքի ղեկավար՝ Արայիկ Հովհաննիսյան Ստորագրություն_____ ԿՏ Իրավաբանական անձի անվանումը՝ _____ Բանկային հ/հ 900252000521 ՀՎՀՀ 06954163 Տնօրեն՝ _____ Ստորագրություն_____ ԿՏ Ֆիզիկական անձ՝_____ Անձ. տվյալներ_____ Հասցե՝_____ Ստորագրություն_____	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Բանկ՝ Գանձապետարանի գործառնական վարչություն, հ/հ 900018003872 ՀՎՀՀ 01805817 Տնօրեն՝ Գ.Հովհաննիսյան Ստորագրություն_____ ԿՏ